Քրեական մասնագիտացում



Լուսինե Հրանտի Սեփխանյան

Ծնվել է 02.10.1986թ.-ին Վանաձոր քաղաքում:

2003-2007թթ. սովորել է «Մխիթար-Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատում:

2010-2012թթ. սովորել է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա գիտակրթական միջազգային կենտրոնի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայում:

31.01.2008-10.03.2017թթ. աշխատել է Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

10.03.2017-26.03.2018թթ. աշխատել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում՝ որպես դատավորի օգնական:

2018թ.-ին ՀՀ արդարադատության ակադեմիայում անցել է մասնագիտական պատրաստում:

15.11.2018-03.12.2018թթ. աշխատել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում՝ որպես դատավորի օգնական:

04.12.2018թ.-ից առ այսօր աշխատում է Լոռու մարզի դատախազությունում՝ որպես դատախազ:

Ամուսնացած չէ:



Էդուարդ Ստեփանի Մկրտչյան

Ծնվել է 12.01.1990թ.-ին Երևան քաղաքում:

2006թ.-ին ավարտել է Եղիշե Չարենցի անվան թիվ 67 միջնակարգ դպրոցը:

2010թ.-ին ավարտել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը, իսկ 2020թ.-ին՝ մագիստրատուրան:

04.02.2011-26.12.2011թթ. աշխատել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի գործավար:

26.12.2011-21.11.2012թթ. աշխատել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմում՝ որպես դատական նիստերի քարտուղար:

21.11.2012-02.12.2013թթ. աշխատել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

02.12.2013-17.02.2015թթ. աշխատել է ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

17.02.2015թ.-ից առ այսօր աշխատում է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում՝ որպես դատավորի օգնական:

Ամուսնացած է, ունի երկու զավակ:



Տիգրան Հրաչիկի Ոսկանյան

Ծնվել է 19.08.1992թ.-ին Երևան քաղաքում:

2009-2013թթ. սովորել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատում՝ իրավագիտություն (մանկավարժություն) մասնագիտությամբ:

2015-2017թթ. սովորել ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա գիտակրթական միջազգային կենտրոնի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայում:

2017-2020թթ. սովորել է Գյումրու «Պրոգրես» համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատում:

18.04.2016-13.07.2016թթ. աշխատել է ՀՀ Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես ցրիչ:

22.07.2016-02.10.2017թթ. աշխատել է Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի գործավար:

02.10.2017-01.07.2019թթ. աշխատել է Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնականի ժամանակավոր պաշտոնակատար:

01.07.2019թ.-ից առ այսօր աշխատում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

2013-2015թթ. անցել է պարտադիր զինվորական ծառայություն ՀՀ զինված ուժերում, եղել է տանկի հրամանատար, դասակի հրամանատարի տեղակալ: Պահեստազորի ավագ սերժանտ է: Պարգևատրվել է «Բանակի Գերազանցիկ» և «Քաջարի մարտիկ» կրծքանշաններով:

Դատական ծառայության երկրորդ դասի խորհրդական է:

Տիրապետում է ռուսերեն և անգլերեն լեզուների:

Ամուսնացած է, ունի մեկ դուստր:



Լուսինե Ռազմիկի Հովհաննիսյան

Ծնվել է 17.08.1972թ.-ին:

1988-1993թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետում:

1994-1997թթ. աշխատել է ՀՀ ոստիկանության անձնագրային բաժնի պետի պաշտոնում:

2000-2003թթ. աշխատել է ՀՀ սոցիալական ապահովության նախարարությունում՝ որպես գլխավոր մասնագետ:

2003-2006թթ. աշխատել է ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովում՝ որպես գլխավոր մասնագետ:

2007թ.-ին աշխատել է էրեբունի և Նուբարաշեն համայնքների դատախազության դատախազի պաշտոնում:

2007-ից առ այսօր զբաղվում է գիտամանկավարժական գործունեությամբ՝ դասավանդելով Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանում, Եվրոպական համալսարանում, ՀՀ ոստիկանության ակադեմիայում:

2010-2019թթ. աշխատել է Եվրոպական համալսարանում՝ ամբիոնի վարիչի, դեկանի պաշտոններում:

2014-2015թթ. ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովում զբաղեցրել է վարչության պետի տեղակալի պաշտոն:

2003թ.-ին Բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից ԵՊՀ մասնագիտական խորհրդի որոշմամբ շնորհվել է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

2012թ.-ին Բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ շնորհվել է դոցենտի գիտական կոչում:

Հեղինակել է մենագրություն «Верховный Совет РА» (1990-1995г.), Ուսումնա-մեթոդական ձեռնարկ, 20-ից ավել տպագրված գիտական հոդվածներ:

Տիրապետում է ռուսերեն և անգլերեն լեզուների, համակարգչային հմտությունների, ծրագրերի:

Ամուսնացած է, ունի երկու զավակ:

**Սարգիս Վասյայի Մնացականյան**

Ծնվել է 30.01.1972թ.-ին Երևան քաղաքում:

1989թ.-ին ավարտել է Երևանի Նելսոն Ստեփանյանի անվան թիվ 139 միջնակարգ դպրոցը:

1989-1995թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետում:

1990-1992թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի հասարակական մասնագիտությունների ֆակուլտետում:

2010-2012թթ. Ռուս-հայկական Սլավոնական համալսարանում հանդիսացել է հանրային իրավունքի հայցորդ:

2012թ.-ին Բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից ՀՀ պետական կառավարման ակադեմիայի մասնագիտական խորհրդի որոշմամբ շնորհվել է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

2020թ.-ին Բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից Եվրոպական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ շնորհվել է դոցենտի գիտական կոչում:

2013թ.-ից առ այսօր հանդիսանում է ՀՀ պետական կառավարման ակադեմիայում՝ դոկտորանտ:

01.09.2014թ.-ից առ այսօր աշխատում է Եվրոպական համալսարանի իրավագիտության ամբիոնում՝ որպես դասախոս:

29.03.1996-06.02.1997թթ. հանդիսացել է Կրասնոսելսկի շրջանի դատախազության ստաժոր քննիչ:

06.02.1997-28.07.1997թթ. աշխատել է Կրասնոսելսկի շրջանի դատախազությունում՝ որպես քննիչ,

28.07.1997-12.01.1999թթ. աշխատել է Կոտայքի միջշրջանային դատախազությունում՝ որպես քննիչ:

12.01.1999-19.02.1999թթ. հանդիսացել է Կոտայքի մարզի դատախազության քննիչ:

19.02.1990-09.08.2002թթ. աշխատել է Կոտայքի մարզի դատախազությունում՝ որպես ավագ քննիչ:

09.08.2002-28.04.2003թթ. աշխատել է Էրեբունի և Նուբարաշեն համայնքների դատախազությունում՝ որպես քննիչ:

28.04.2003-13.11.2005թթ. աշխատել է Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների դատախազությունում՝ որպես ավագ քննիչ:

23.11.2005-27.09.2006թթ. աշխատել է որպես Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների դատախազի օգնական:

27.09.2006-30.11.2007թթ. աշխատել է ՀՀ գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազ:

30.11.2007-09.11.2009թթ. աշխատել է ՀՀ գլխավոր դատախազության ընդհանուր բնույթի հանցագործությունների գործերով վարչության պետ:

09.11.2009-07.11.2013թթ. հանդիսացել է Արարատի մարզի դատախազ:

07.11.2013-13.10.2016թթ. աշխատել է ՀՀ գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության վարչության ավագ դատախազ:

13.10.2016-03.11.2018թթ. հանդիսացել է Գեղարքունիքի մարզի դատախազ:

03.11.2018-15.09.2020թթ. հանդիսացել է Արագածոտնի մարզի դատախազ:

15.09.2020թ.-ից առ այսօր հանդիսանում է Արմավիրի մարզի դատախազ:

05.2006-07.2006թթ. վերապատրաստման դասընթացներ է անցել Եգիպտոսի ոստիկանության ակադեմիաում, իսկ 05-1999-07.1999թթ.՝ ՌԴ գլխավոր դատախազությանն առընթեր Սանկտ-Պետերբուրգի իրավաբանական ինստիտուտում:

Հեղինակ է գիտական հոդվածների՝

-ՕՐԵՆՍԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՈՒՄ («Օրինականություն» ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես №117 Երևան 2020թ. 41-45),

-«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎԱՊԱՀՊԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ» (ՏԻՐ հրատարակչություն Երևան 2019թ. 42էջ),

-ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ. ՏԵՍԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ (<<Արդարադատություն>> գիտական ամսագիր № 1 (47) Երևան 2018թ. 22-25էջ),

-ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ (<<Արդարադատություն>> գիտական ամսագիր № 1 (42), Երևան 2018թ. 5-8էջ),

-ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ (Մենագրություն Երևան 2012թ. 172էջ),

-ПРОБЛЕМЫ ПРОТИВОДЕЙСТВИЯ КОРРУПЦИИ ОРГАНАМИ ПРОКУРАТУРЫ АРМЕНИИ В КОНТЕКСТЕ ОБЕСПЕЧЕНИЯ КОНСТИТУЦИОННОЙ БЕЗОПАСНОСТИ ГОСУДАРСТВО

СОТРУДНИЧЕСТВО ГОСУДАРСТВ-УЧАСТНИКОВ СНГ В БОРЬБЕ С КОРРУПЦИЕЙ: ПРОБЛЕМЫ И ПЕРСПЕКТИВЫ Сборник материалов научно-практической конференции ((6-7 декабря 2012г. г.Москва) Москва 2013. 61-67ст.)

Պարգևատրվել է ՀՀ վարչապետի կողմից՝ անվանական զենք, 2012թ.,

ՀՀ պաշտպանության նախարարի կողմից՝ Գարեգին Նժդեհ մեդալ, 2009թ.,

ՀՀ Արարատի մարզպետի կողմից՝ Պարույր Սևակ մեդալ, 2013թ.,

ՀՀ գլխավոր դատախազի կողմից՝ ոսկե ժամացույց, 2008թ.,

Բելառուսիայի Հանրապետության գլխավոր դատախազի կողմից՝ հուշամեդալ, 2014թ.,

ՌԴ սահմանապահ զորքերի Արտաշատի զորամասի հրամանատարի կողմից՝ 55 ամիակի հուշամեդալով, 2010թ.,

ՀՀ գլխավոր դատախազի կողմից՝ «ՀՀ դատախազության 95-ամյակ» հոբելյանական մեդալ, 2013թ.,

ՀՀ գլխավոր դատախազի կողմից՝ «ՀՀ դատախազության 100-ամյակ» հոբելյանական մեդալ, 2018թ.:

Հանդիսանում է արդարադատության երրորդ դասի պետական խորհրդական, ՀՀ զինված ուժերի պահեստազորային լեյտենանտ:

Տիրապետում է անգլերեն և ռուսերեն լեզուների, Office, Outlook Express համակարգչային ծրագրերի:

Ամուսնացած է, ունի երկու զավակ: